ՄԵԾՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Լրագիրս գնացով ամ է 4 դրամ հանապարհ յայտարարութիւնն պակաս է 1 արծաթ։

Հրատարակվում է ամեն շաբաթ մի անգամ։ Տարեկան գինն է 6 ռուբլի։

Զ. ՏԱՐԻ — ՕԳՈՍՏՈՍԻ 31. 1863 ԱՄԻ — № 29.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ներկայ օգոստոս ամսոյս 28-ին կէսօրից առաջ ժամը տասնմէկից մի քառորդ պակաս Նորին Կայսերական բարձրութիւնը կայսրորդին և ժառանգը Նիկոլայ Ալեքսանդրովիչը յարդեց մեր քաղաքը իր այցելութեամբ։ Ընդունելութիւնը ժողովրդեան կողմանէ՝ շատ սիրալիր էր և արտայայտում էր նորա դէպի Ռուսաց Կայսրական տունը ունեցած սիրոյ, հաւատարմութեան և յարգանաց զգացմունքները։ Երեկոյեան բոլոր քաղաքը փառահեղութեամբ լուսաւորած էր։ Այս օրը, կարծես մի առանձին հանդիսաւոր և մեծ օր էր քաղաքի համար։

Բ.

Լեհ ազգային կառավարութեան հրովարտակը Եւրոպայի ազգերին և կառավարութիւններին։

Մեր ապստամբութեան սկսած օրից, այս առաջին անգամն է որ մենք դառնում ենք մեր հրաւէրով դէպի ձեզ, ով Եւրոպական գերտաստանի եղբայրներ։ Մենք անում ենք այս այսմ ոչ թէ մեր գիւցազնական անցեալի կամ մինչև անգամ մեր պատմական սրբազան իրաւանց հիման վերայ, այլ կենդանի իրողութեան պատճառով։

Այս իրողութիւնը միայն ազգի ընդհանուր ապստամբութիւնը չէ և եռապատիկ բազմութիւնը պատերազմողների համեմատելով զէնքերի հետ, որոնք ունինք մեր ձեռքին. ոչ. սրա չեն այն իրողութիւնը, այլ նա է ազգային կառավարութեան վերածնութիւնը, որնոր կատարում է իր պարտքը, չնայելով բոլոր արտաքին արգելքներին և Ռուսաստանի սահմանը և ջանքին ուղղել իր հարուածները մարդկութեան և իրերի Աստուածային կարգաւորութեան դէմ։ Մարդիկ անկարող են հնարել միջոցներ պահպանելու համար նրան, որին հակառակ է բնութեան զօրութիւնը։ Այն իրողութիւնը է ազգային կառավարութեան ամենակարողութիւնը ամէն այն բանի մէջ, որնոր կրում է քաղաքական անուն, կարողութիւնը, որնոր հիմնված է միայն ընդհանուր ազգի կամաւոր ճանաչման և ընդունելութեան վերայ։—Այս է իրողութիւն, որնոր պարզ է և հասկանալի ամէն մարդու համարումն միայն յայտնի է. որ 300.000 հին զինուորներից բաղկացած մի բանակ պաշտպան է յափշտակիչ զօրութեան, պարզ է և հասկանալի ամէն մարդու համար, որին, թէև ակամայ, միայն յայտնի պէտք է լինի, որ Ռուսաստանը, ուր միայն ձեռքը հանում է, աշխատում է մահուամբ վրէժ հանելու նրանից, ով ցոյց է տալիս ամենափոքր հնազանդութիւնն էլ ազգային կառավարութեան։ Ահա այս իրողական հայեցուածքով դառնում է ձեզ Լեհաստանը, ով Եւրոպական ազգեր և կառավարութիւններ, իր իշխանութեան միջոցով։

Մեր առաջին ձեզ ասելու խօսքը է շնորհակալութիւնը այն համակրութեան համար, որնոր ընկերակից է մեզ, ազատութեան համար արած պատերազմի սառաջին օրից սկսած։ Այս համակրութիւնը ապացուցանում է, որ ալեւոր Արևմուտքը անտարբեր չէ իրաւանց

ձայնին և չէ մերժել այն առաքելութիւնը, որնոր գրել է նորա վերայ նախախնամութիւնը: Այս համակրութիւնը տալիս է մեզ կենդանի յոյս, որ մենք, Աստուծոյ կամքով, պատերազմը վերջացնելից յետո կ'հանգստանանք եղբայրական ընկերակցութեամբ: Մեզ յայտնի է, որ պատերազմը տևողական է և ծանր. կիսամեայ փորձը ցոյց տուեց մեզ, որ մենք մեր յոյսը միայն մեր վերայ պէտք է դնենք: Մենք գիտենք նմանապէս, որ այս պատերազմը կ'վերջանայ միայն այն ժամանակ, երբ կատարելապէս կ'զվանայ մեր ազատութեան և անկախութեան ծարաւը:

'Ի զուր կարծում էր արևմուտքը, թէ մատնաւոր բարեկարգութիւնները և յեղափոխութիւնները կարող են մեզ գոհ անել: Ոչ մեր համար չէին կարող լինել փրկութիւն, որովհետև մենք չունինք երաշխաւորութիւն մեր ազգային անկախ կառավարութեան համար: 'Ի զուր կարծում էր արևմուտքը թէ ծանր պատերազմը կ'տաղտկացնէ մեզ և կ'ստիպէ ձեռք վեր առնելու մեր միակ նպատակից: Արևմուտքը հանգիստ լինելով իր սեպհական անկախ դրութեան համար, մոռացել է, թէ ինչ կ'նշանակէ պատերազմը կեանքի համար, պատերազմ, որի պատճառը է ազրելու ցանկութիւնը, և իր ազատութեան դիտակցութիւնը—պատերազմը, որնոր սկսվել է մերկ ձեռներով: Մենք ստիպված ենք եղել զէնքը թշնամուց խլել և կամ դնել նրան մեծ դժուարութիւններով և բացի սրանից վճարել նորա համար արիւն. որքան զէնք կայ մեր զինուորների ձեռքումը, այնքան մարդու էլ կեանք է նստել մեզ նրանց ձեռք բերելը: Այս զէնքերը օր արիւնով է գնած, այսպիսի զէնքը անհնար է վայր դնել: Ռուսաստանը զգում է և դիտէ, որ միակ միջոցը մեր դէմ պատերազմելու է մեր ջնջումն:

Մենք ձեզանից օգնութիւն և փրկութիւն չենք խնդրում: Աստուած մեր կազմուածքը բաւական զօրեղ է ստեղծել, անուան երաշխաւորութիւն ձեռք բերելու համար, եթէ միայն ազատ շարժումն կ'ունենանք: Մենք պահանջում ենք միայն, որ դուք չուրանաք ձեր նպատակը և համդիմունքները: Մեր գոյութեան անունով, որնոր քակտում է սարկութեան կապերը և այն համակրութեան պատճառովը, որնոր պէտք է անքակտելի կերպով կապէ մեզ միմեանց հետ, մենք պահանջում ենք, որ կտրէք ձեր կապակցութիւնը Ռուսաստանի հետ, կապակցութիւնը, որնոր կապում ու կաշկանդում է ձեզ ձեր խաղաղական ընթացքի մէջ և որնոր, հակառակ ձեր զգացմունքներին, արել է ձեզ դատապարտելի յանցանքներին մատնակից: Քակեցէ՛ք այդ կապերը և ճանաչեցէք մեր կենդանութիւն ունենալու իրաւունքը, որնոր իրողապէս արդէն կայ, թող չնայեն ձեզ Ռուսաստանի խոստումները: Մենք հանդէս դուրս գալով այն սկզբունքների անունով, որոնք դրոշմած են մեր դրօշակի վերայ, մենք չենք կարող լինել խաղաղութեան խանգարողներ և աշխարհակալներ: Ազատութեան և անկախութեան գործը դնում է մեզ իր համար նոր նեցուկ և պաշտպան, որովհետև մենք այս սկզբունքների համար ենք ոտք կանգնած և շատ լուզում ու ճանաչում ենք Եւրոպայի ազգերի միմեանց երաշխաւորութիւնը, ուստի և չենք էլ կարող վստահիլ նրան դիպչելու: Մեզ հերիք է մեր հայրենիքը, և ազատութիւնը այնքան թանգագին է մեր համար, որ մենք կամենում ենք, մեր կարգադրութիւններն էլ հիմնել միայն ազատ քաղաքացիների ազատ խոստովանութեան և ճանաչողութեան վերայ: Ձեր համակրութիւնը մեր կողմն է, իսկ ձեր զօրութիւնը Ռուսաստանին է թիկունք: Ձեր մէջ է այդ զօրութիւնը, դուք պաշտպանում էք նրան, միայն ձեր զօրութիւնը ուղղած է մեր դէմ: Նայեցէ՛ք միանգամ, թէ ուր է հասցրել ձեզ ձեր դաշնակցութիւնը Ռուսաստանի հետ, դաշնակցութիւնը, որնոր հիմնած է պատմական անիրաւութեան վերայ: Դուք խլում էք մեր զօրքը, այս մեր միակ օգնութիւնը, բռնում էք նրանց, որոնք ձեր մէջ ծառայում են մեզ, հալածում էք նրանց, որոնք շտապում են մեզ օգնութիւն հասնելու: Դուք պահանջում էք մեզանից, որ յարգենք ձեր դաշնագրութիւնները և պայմանագրութիւնները և ձեր այդ դաշինքներով սպանում էք մեզ, դուք խոստովանում էք, որ մեր գործը իրաւացի է և դուք նորա պաշտպաններն էք, բայց միևնոյն ժամանակ ամէն տեղ, բոլոր Եւրոպայի մէջ, մենք ստիպված ենք այս մեր իրաւունքի հետ միասին թաղչելու սարերի կրեայ տեղերումը: Ահա ուր է հասցրել ձեզ ձեր դաշնակցութիւնը Ռուսաստանի հետ, որնոր մերժում է ձեր համակրութիւնը, որովհետև սա կապուած չէ գործի հետ, և ուսանում է նրան միայն զրկուումն դատաճանութեան ընդհանուր տիեզերական կարգի դէմ:

Այսպէս կրկին անգամ Լեհաստանի մէջ նոր յոյութիւն առած կեանքի անունով, և այն համակրութեան անունով, որնոր ունիք դէպի մեզ, յորդորում ենք ձեզ, կանգնեցէք այն ճանապարհի վերայ, որնոր մեզ ամէնից ցոյց է տուել նախախնամութիւնը, բարձրաձայն խոստովանեցէք, որ Ռուսաստանը չունէ ամենևին իրաւունք իշխելու մեր վերայ և թող դառնայ այսուհետև լուսաւորութեան և Եւրոպական բարեկամութեան բոլոր զօրութիւնը ոչ թէ մեր դէմ, ինչպէս մինչև ցայժմ էր, այլ մեր հասարակաց թշնամու դէմ: Այս բանի համար դուք կ'դառնէք մեզ մշտնջենական պաշտպան. միայն սրբանով Եւրոպական քաղաքականութիւնը կ'կանգնի հաստատուն հիման վերայ: Այս պահանջում ենք

մենք ձեզնից կարգի, խաղաղութեան և Եւրոպայի ազգերի եղբայրութեան անունով:

Վարշավա· 1863 թուականի յուլիսի 31-ին:

—Le temps լրագիրը օգոստոսի 3-ին ասում է, ոչ մի հարց դեռ ևս այնպես մարդոց մտքերը չէ վրդովել, ինչպես Լեհաստանինը· ոչ թէ օրէցօր, այլ ժամ առ ժամ հասարակաց կարծիքը փոփոխվում է ու անցնում խաղաղութիւնից դէպի պատերազմ և պատերազմից դէպի խաղաղութիւն: Այս նման է մագնիսէ սլաքին, որ տատանելով իր բևեռի վերայ և շարժվելով երեք տրոնականութեան ազդեցութիւնից, ոչ մի հաստատուն և որոշ ուղղութիւն չէ առնում: Եթէ հարցի վճիռը, հարկի պահանջելով դառել է անորոշ, բայց որովհետև նա կախված է մի քանի փոքրաթիւ զօրաւոր կամքի տէր անձինքներից, ուստի կարելի է ասել, որ բուն հարցը, այսինքն խաղաղութեան և պատերազմի հարցը, չէ զանազանվում ուրիշ ամենագարդ խնդիրներից:

Մէկ կողմից երեք մեծ տէրութիւնները, իրանց շահը և իրաւունքները աչքի առաջ բռնելով, Ռուսաստանից պարզ և վճռական պահանջողութիւններ արին և յայտնեցին, թէ իրանք դոհ կ'լինեն, միայն իրանց պահանջածները կատարուած տեսնելով· միւս կողմից Ռուսաստանը նոյնպես վճռաբար յայտնեց, որ 'չէ կարող նոցա պահանջմունքներին բաւարարութիւն տալ, մերժելով այն տէրութեանց իրաւունքը խառնվելու նորա ներքին գործքերի մէջ և թոյլ չտալով ոչոքի դիպչելու մեծ ազգի (Ռուսաց) պատուին: Ուրեմն երկու կողմից էլ բանը պատուի պահպանութեան է հասել: Այժմ ոչ մէկը չէ կարող իր պահանջներից ձեռք վեր առնել, առանց ցոյց տալու իր զիջումով մի տեսակ երկչոտութիւն, ուրեմն և անպատուելով իրան: Ասենք թէ կարելի էլ որ լինի խորհիլ մի այնպիսի նոր հնարք, որ Ռուսաստանը, կամ թէ ոչ, երեք տէրութիւնները յետ կանգնին իրենց առաջին պահանջողութիւններից, սակայն և անկարելի է, որ այսպիսի ճանապարհով ձեռք բերուած խաղաղութիւնը միաբանող կողմերից մէկնումէկին անպատուութիւն չբերի: Երեք տէրութիւնքը իրանց առաջարկած պահանջողութիւններից ոչ մէկից էլ ձեռը չեն վեր առնում, իսկ Ռուսաստանը ոչ մէկին էլ դուր չէ տալիս ինչ որ իրանից պահանջում են: Ահա քեզ երկու խօսքով գործքի բուն դրութիւնը: Աւելի մտածելու կարօտ չէ, որ մարդ հասկանայ, թէ այսպիսի մէկ դրութիւն ճիշտ պատերազմ է գուշակում: Բայց նրանից, կան էլի ուրիշ զօրաւոր պատճառներ պատերազմի կարելիութեան մասին, որոնց վերայ արժան է մտածել նոյնպես· զորօրինակ՝ թէ որ Անգղիայի, Աւստրիայի և Ֆրանսիայի մէջ մինչև օրս թաղաւորած համաձայնութիւնը խանգարուի, այնուհետև խնդիրն էլ ուրիշ ձև կառնու:

Օրինակի համար՝ Ռուսաստանը իր կողմանէ գործի դրութիւնը մեծ փոփոխութեան տակ ձգելու կարող կլինի, թէ որ ուզենայ Լեհաց թագաւորութիւնը իրան հետ կապել մի նոր աղատական բարեկարգութեամբ: Այս ասելով մենք չենք պնդում, թէ որև իցէ այսպիսի ձեռնարկութիւն կարող է Լեհաց ազգին հաճելի թուիլ, և թէ ուրեմն մի այդպիսի որոշմունք կարող է խսպառ վախճան տալ և խնդրոյն· սակայն և պէտք է խոստովանինք, որ այսպիսի մի ձեռնարկութիւն Ռուսսիայի կողմանէ տէրութիւններին կարող է իրար գցել: Այս էլ պիտի ասենք, որ այս բոպէիս դեռ ոչինչ չենք տեսնում, որ պարզ պատերազմ լինի գուշակում: Այս կայ, որ երեք տէրութիւններից զրկուած թղթերը թէպէտ և մի և նոյն բառերով գրուած չեն, սակայն խորհուրդը նոյն և նման է: Ինչ որ Ռուսիայի ազատական խոստմունքներին կը վերաբերի, այդ մասին կ'ասենք, որ տակաւին գործքով և լեսվին գլուխ բերած չենք տեսնում:

Lndêpendance Belge և lé Nord ֆրանսիերէն օրագրերին վերջինայէն հետագրական նամակով հաղորդուած է երեք տէրութիւններից Ռուսիային ուղղուած թղթերի բովանդակութիւնը և այս թղթերի արածած տպաւորութիւնը Ս· Պետերբուրգումը: Սոյն նամակի իմաստը յառաջ բերենք այս տեղ, նրան բովանդակութեան ստուգութեան մասին երաշխաւորութիւնը ձգելով յիշեալ երկու օրագիրների վերայ: Ահա նամակի խօսքերը· Ս· Պետերբուրգից եկած նամակները ասում են, որ Ֆրանսիայի վերջին անգամ դրկած ծանուցագրի տպաւորութիւնը բոլորովին խաղաղասիրական է և թղթի ոճը չափից աւելի փափուկ է· Անգղիայի ծանուցագիրը թէպէտ և աւելի կտրուկ ոճով է գրուած, սակայն նոյնպես խաղաղասիրական ոգւով: Երկու ծանուցագիրն էլ վաղուցուան առաջարկութիւններն են կրկնում և յայտնում են կարեկցութիւն, որ Ռուսաստանը համաձայնութիւն չցայտնեց վեց յօդուածների, ժողովքի և զինադադարի մի մասին: Նոքա ցոյց են տալիս, որ տակաւին յոյս ունին, որ Ռուսսիայի կառավարութիւնը ծանրութարակ մտածելից մի նոր որոշմունք անելու կը համոզուի: Բացատրութիւնից ծագելիք հետևանքների պատասխանատուութիւնը Ռուսիայի վրայ ձգելով, նոքա յայտնում են, որ միջնորդող տէրութիւնները դաշնադրութիւնների ուղիղ մեկնութեամբ իրանց վերայ դրուած պարտաւորութիւնքը կատարելու համար կրկին և առաւել հաստատուն կամք յետ չեն կանգնում իրանց առաջին պահանջողութիւններից: Դրուէն դը Լիւի Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարը

լիք ծանուցագրի վերջումը յայտնում է, որ ինքը մը-տադիր է սպասել և նայել, թէ Ռուսիան ինչ միջոց-ների պիտի դիմէ և յոյս ունի, որ միջոցների օգնու-թեամբ խաղաղասիրական համաձայնութիւնը կյա-ռաջանայ խոսակցող տէրութեանց մէջ։ Աւստրիայի ծա-նուցագրի բովանդակութեան մասին ստոյգ տեղեկու-թիւն մի առնուած չէ։

Ռուսաց «Голосъ» լրագիրը հետևեալ տեղեկու-թիւնը հրատարակում է Ֆրանկ-Ֆուրտի Գերմանա-կան թագաւորների ժողովքումը Աւստրիոյ կայսեր արած առեղծուածաւոր ատենաբանութեան վրայ։

«Ահա, ասում է նոյն լրագիրը գլխաւոր կէտերը Աւստրիոյ կայսեր ատենաբանութեանը, որով նա բաց արաւ ժողովքը, «Գերմանական ազգի թագաւորների ատեանը, որ հայրենեաց երջանկութեան վերայ խորհր-դակցելու համար ժողովուել է, այնպիսի իրողու-թիւն է, որոյ նմանը անցեալ ժամանակաց մէջ չէ եղել տայ Աստուած, որ մեր միասին հանդիպիլը մեր ապա-գայի համար դառնայ մի արդիւնաւոր սկիզբն երջա-նիկ հետևանքների։» Սրանից յետոյ կայսրը յայտնեց, որ ինքը կամենում է շուտով դլուխ բերել դաշնակցու-թիւնը վերանորոգելու խորհուրդը, որոյ նպատակն է վերածնանիլ հասարակաց հայրենիքը։ Այսուհետև յառաջ բերեց յառաջակայ Գերմանական վերանորո-գութեան նախագիծը (проектъ) և իր կողմանէ աւելացրուց թէ պէտք է, որքան կարելի է շուտով միմեանց հետ համաձայնել մանր խնդիրներումը, որովհետև բուն դլխաւոր նպատակը Գերմանիայի համար անսահման մեծ կարևորութիւն ունի։ «Սակայն ևս, ասաց նա, ամէն բանի մէջ բաց պիտի թողնենք Պրուսիայի հա-մար տեղ, իրան կարողութեանը վայելուչ։» Արդեօք այս մխիթարութիւնը, որոնք Պրուսիային խոստացու-ում է, կարող է նորա թագաւորի Վիլհելմի յամա-ռութիւնը յաղթել։ Չենք կարծում։ Բայի միւս պատ-ճառները, որով Պրուսիայի թագաւորը մերժում էր Աւստ-րիոյ կայսերը Ֆրանց Իոսիֆի հրաւէրը, կայ մի ուրիշ պատճառ էլ, որ ևս տեսնելի զօրացնում է նորա տը-հաճութիւնը։ Այս պատճառն է այն եռանդը, որոյ դլխաւոր առարկայ եղած է Աւստրիոյ կայսրը դաշնակ-ցութեան մայրաքաղաքում։

Բայց Ֆրանկ-Ֆուրտի ժողովը կարող պիտի լինի արդեօք հասնել իր նպատակին։ Այս խնդիրը քննու-թեան տակ է ձգում «La France» Ֆրանսիայի լրագիրը որ տեղից հետևեալ քաղուածքը է անում Ռուսերէն «Голосъ» լրագիրը։ Գերմանական դաշնակցութեան թա-գաւորները, բայի Պրուսիային. Դանիայինը և Լիպպէ Դետմոլդինը, իսկայն ամէնը 'ի Մասին յոժար դանուե-ցան Աւստրիայի հրաւէրին։ Բայց մի թէ այս կերպ յոժարութիւնից կարելի է վճռաբար դուշակել, որ ա-մէնն էլ կայսեր սկզբունքներին հաւանում են։ «Ընդ հակառակը՝ (ասում է «Голосъ» յառաջ բերելով Գազ-ղիերէն լրագրի խօսքերը), այս մեծափառ ժողովքումը գտնում են այնպիսի թագաւորներ, որոնք յայտնի դիտաւորութեամբ հիմել են վերանորոգութեան գործը խափանելու համար և սրան ընդդէմ ձայն տալու նպա-տակով։ Սոքա են բոլոր հիւսիսային Գերմանիոյ թա-գաւորները, որոնք վաղնջուց բարեկամութեամբ և անքակտելի դաշինքներով կապուած են Պրուսիայի հետ։ Վերանորոգութիւնը լաւ է թէ վատ է, նրանց փոյթ չէ։ Նոքա կարծես չեն ուզում ընդունել Վիեննայից դուրս եկած և ոչ մի բարութիւն։» Ապա ինչի համար դիմե-ցին ժողովքը։ Սորա պատճառը չէ թէ Ֆրանց-Իոսիֆ կայսեր ազդեցութիւնն էր, այլ հասարակաց ձայնը։ Բիսմարկի շնորհիւը անցաւ դնաց էն ժամանակը, երբ Պրուսիան պարապելու էր ճանաչուում Գերմանիայի ազատասիրականաց։ Հասարակ կարծիքը յառաջ դնաց և սաստիկ ուժով պահանջեց փոփոխութեան մեքե-նային, որ կոչուում է Գերմանական դաշնագրութիւն։ Վիեննայումը ամէն բանը հասկացան և ժամանակից օգուտ քաղել ուզեցին որպէս զի որ իրանք լինին պարագլուխ Գերմանական ազգային շարժմանը և իրանքը նոնն Պրու-սիայի տեղը։ Պրուսիայի թագաւորը հարկաւ կամ պէտք է հրաժարուէր հրաւէրից կամ պէտք է փոխէր իր քա-ղաքականութեան ձևը, այսինքն պէտք է պաշտօնից հանէր Բիսմարկին։ Բայց այնու ամենայնիւ ժողով-քումը մասնակից են Պրուսիան ներկայացնող բազմա-թիւ հիւսիսային թագաւորներ, որոնք թէպէտ և տը-հաճեն Պրուսիայի անաղարտաբայլ քաղաքավարու-թիւններից, սակայն և չեն յոժարում Գերմանական դաշնակցութեան կառավարութեան սանձը Աւստրիայի ձեռը անց կացնել։ «Ուրեմն, ասում է նոյն Ֆրանկիֆ-ուրտեան լրագիրը, շատ կարելի է, որ Ֆրանկ-Ֆուրտումը հաւաքուած թագաւորների ամբողջ ժողովքը եռան-դով հանուի դէպի վերանորոգութիւն և հաճու-թեամբ միաբանի այն ազատասիրական սկզբունքնե-րին, որոնք պատիւ հարմարում է Աւստրիան ծածա-նեցնել իր դրօշակի վերայ։ Նշան է այս հասարակաց կարծիքը յարդելու, յառաջ դիմելու և 19-դ դարու։ Թէ որ տարաձայնութիւն ծագի, միմեանց վերանորո-գութեան գործը ամէն մէկ երկրի վիճակին յարմարաց-նելու խնդրոյն համար պիտի ծագի։ Ինչ կայ։ Մի քայլ փոխուած է, հիմքը դրուած է։ Աւստրիոյ կայսրը կարելի է որ չիարենայ դլուխ բերել բանը թող մնայ նորա յաջորդին։

Թուրինեան «Ջ օգոստոս» դրում է «Крестовая Газета» Վիեննայից ստացած լուրերն այս տեղի կառավարու-

թեան սիրան մեծ երկիւղ են զցում, ճշմարիտ են այս համբաւներն թէ սուտ, սրան համար դատաստան անելդժուար է, բայց հաւաստի է այն, որ այս տեղը շանակութիւն են տալիս նրանց և այս համբաւներն կարճ միջոցում կ'ունենան երևելի ներգործութիւն Իտալիայի քաղաքականութեան վերայ: Բաւականին յայտնի է, որ Ֆրանսիան արդէն շատ ժամանակ է հետևում է ստիպել Աւստրիային, որ իրան հետ սերտ կապակցութիւն ունենայ, թէպէտ և բաղդը չէր օգնում նորա այս հետևողութեան, այժմ, ըստ երևոյթին, վիճաբանումը պատրաստ են փոխել իրանց առաջվայ հայեցուածքը: Լուդովիկ Նապոլէոնը իր սովորութեամբ չ'զլացաւ ոչ մի միջոց, որին յաջողեցաւ ևս գտնելմի քանի կուսակիցներ, որոնք մինչև ցայսօր թշնամի էին նորա անձին, իսկ այժմ սրանց օգնութեամբ կարող է, չմոռիկ տալով մի քանի ամենակարելի դժուարութեանց հաստատել վերջապէս այն ցանկալի սերտ կապն Աւստրիայի հետ: Ինչպէս կը ծանուցանեն, հիմքը այս սերտ կապակցութեան լինելու է հետևեալն: Աւստրիայն պէտք է տայ Լեհաստանին Գալիցիան և սորա փոխարէն ստանայ իրև վարձատրութիւն Դանուբեան իշխանութիւնները: Նապոլէոնն պէտք է հետևի նորա համար, որ Իտալիայի կողմից Աւստրիայի վերայ յարձակումն չ'լինի կամ յեղափոխականներից չ'վտանգուի: Աւստրիան պէտք է լինի գլուխ Գերմանիայի: Այս բոլորի մասին շատ հեշտ է համաձայնիլը. միայն Ֆրանսիան իսկապէս կամենում է Լեհաստանի վերականգնելու պատիւը ստանալ: Արդեւքը, որնոր չէ թողնում կայսր Ֆրանց Յովսեփին և Ռեխբերգին համաձայնել Նապոլէոնի դարսողութիւններին, այն է, որ նա պահանջում է Ֆրանսիայի համար Ռէյնի նահանգները:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՆԴԷՍ ՀԱԿԱՌԱԿՈՒԹԵԱՆՑ

ՀԱՑՈՑ

ԳՐԱԲԱՌ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԲԱՌ ԼԵԶՈՒԱՑ:

Աշխարհիս ամէն բան հակառակն ունի. Հայոց զրաբառ և աշխարհաբառ լեզուներն էլ աշխարհի հակառակութեանց կարգի մէջ կ'կռվին: Սոստիկ է սոցա կռիւ. ինչպէս մէկը հնութեան և միւսը նորութեան թագաւորներ լինին, և իւրաքանչիւր իւր ժամանակին ունեցած անձինքերով և ըստացած պատիւներով զօրք ու բանակ կազմած հսկայական իրաւունքներով դէմ ընդդէմ ճակատ կմղին:

Մեք աւելի խորհրդածութիւն չենք ուզեր անել սոցա իրաւանց և գործոց վերայ, այլ միայն փութամբ մեր ուշը դարձուցանել նոցա ճակատամարտութեանց ասպարէզը, որ հետևեալ հանդիսիւ կներկայանայ մեզ:

ԳՐԱԲԱՌ.

Ի՞նչ ժամանակի հասանք, տէր Աստուած. դու էլ հին ես, ով Աստուած. ի՞նչպէս ուրեմն կներես այս նոր բասէր նորելուկներին, որ երէկ եղան, այսօր մեզնից յառաջ կըզան: Տօ՛ աշխարհաբառ, մինդամ մտածէ չափիդ ու հասակիդ վերայ: Ա՜հ ինչ ասեմ. բարկանամ, տղայ ես. խրփեմ, որդի ես. ըսպանեմ, իմ ես. բայց կխնայեմ. սրտիս մէջ ոչ գութ թողիր, ոչ սէր. յանդուգն ես, յանդուգն. ինձմէ ծնար, ու իմ կենաց և իրաւանց յափշտակող եղար:

Զե՛մ. բայց կ'ներեմ քեզ. իրրև հայր կ'խրատեմ քեզ. կա՛ց դու, քո կարգիդ. իմ փառաց ճանապարհը բաց թող. Աբիսողոմ դու, զիտացիր, որ Դաւիթի Աստուածը մեծ է: Որդիութեամբ կա՛ց, հպատակութեամբ վարվիր:

Զե՞ս գիտեր, որ ես գլուխս շարժեմ Աստծուց մինչև վերջին արարած դատավաղ և վրէժխնդիր կթափեմ զլխիդ:

Գիտե՞ս ա, ես հին եմ, որ բարկացայ գլխիդ տիկը կ'հանեմ:

Նապաստակ առիւծի երես, այնպէս դուինձ կերևիս. դնա՛ քարերու մէջ. դնա՛ ամայի դաշտեր. այն տեղեր ծնայ ես քեզ. քաղաքներու մէջ ի՞նչ կշրջիս անընդդամ դու: . .

ԱՇԽԱՐՀԱԲԱՌ

Տակաւին պիտի երկարե՞ս խօսքդ. ակամայ յանդգնեցնում ես ինձ. իրրև ծեր զառամեալ, իրրև գլուխս յամառեալ և իրրև հոգի մոլորեալ ոչ աշխարհից տեղեակ ես, ոչ ժամանակից, և ոչ իսկ ասած խօսքերդ կհասկանաս:

Հնացար անցար: Պէտք է մեծաց մեղմանալ և փոքունց ածիլ:

Գնա՛ քո դարը աճիւններու մէջ խնդրէ. այս մեծաբարբառ իրաւաբանութիւններդ մեռելոց քաղաքը, գերեզմանատուն կարդա՛. այժմեան կենդանիք նոր են, նորութիւն կսիրեն. բաւական էր հնութիւն, այնչափ հնացրուց նրանց անձը, խաւարեցրուց նրանց աչքը: Ցեռս կա՛ց, փախիր գերեզմաններ, եկել ես բերանովդ մահ կխնդրես, փախիր, կխնայեմ քեզ:

Հին ես, պէտք է թաղվես:

Եւ ի՞նչ գերեզմաններից վեր ես կացել, կուզաս կենդանեաց վերայ թագաւորել: Վա՜հ, արդարև հին, ո-

Մեք աւելի խորհրդածութիւն չենք ուզեր անել սոցա իրաւանց և գործոց վերայ, այլ միայն փութամբ մեր ուշը դարձուցանել նոցա ճակատամարտութեանց ասպարէզը, որ հետևեալ հանդիսիւ կներկայանայ մեզ:

ԳՐԱԲԱՌ.

Ի՞նչ ժամանակի հասանք, տէր Աստուած. դու էլ հին ես, ով Աստուած. ի՞նչպէս ուրեմն կներես այս նոր բասէր նորելուկներին, որ երէկ եղան, այսօր մեզնից յառաջ կըզան: Տօ՛ աշխարհաբառ, մինդամ մտածէ չափիդ ու հասակիդ վերայ: Ա՜հ ինչ ասեմ. բարկանամ, տղայ ես. խրփեմ, որդի ես. ըսպանեմ, իմ ես. բայց կխնայեմ. սրտիս մէջ ոչ գութ թողիր, ոչ սէր. յանդուգն ես, յանդուգն. ինձմէ ծնար, ու իմ կենաց և իրաւանց յափշտակող եղար:

Զե՛մ. բայց կ'ներեմ քեզ. իրրև հայր կ'խրատեմ քեզ. կա՛ց դու, քո կարգիդ. իմ փառաց ճանապարհը բաց թող. Աբիսողոմ դու, զիտացիր, որ Դաւիթի Աստուածը մեծ է: Որդիութեամբ կա՛ց, հպատակութեամբ վարվիր:

Զե՞ս գիտեր, որ ես գլուխս շարժեմ Աստծուց մինչև վերջին արարած դատավաղ և վրէժխնդիր կթափեմ զլխիդ:

Գիտե՞ս ա, ես հին եմ, որ բարկացայ գլխիդ տիկը կ'հանեմ:

Նապաստակ առիւծի երես, այնպէս դուինձ կերևիս. դնա՛ քարերու մէջ. դնա՛ ամայի դաշտեր. այն տեղեր ծնայ ես քեզ. քաղաքներու մէջ ի՞նչ կշրջիս անընդդամ դու: . .

ԱՇԽԱՐՀԱԲԱՌ

Տակաւին պիտի երկարե՞ս խօսքդ. ակամայ յանդգնեցնում ես ինձ. իրրև ծեր զառամեալ, իրրև գլուխս յամառեալ և իրրև հոգի մոլորեալ ոչ աշխարհից տեղեակ ես, ոչ ժամանակից, և ոչ իսկ ասած խօսքերդ կհասկանաս:

Հնացար անցար: Պէտք է մեծաց մեղմանալ և փոքունց ածիլ:

Գնա՛ քո դարը աճիւններու մէջ խնդրէ. այս մեծաբարբառ իրաւաբանութիւններդ մեռելոց քաղաքը, գերեզմանատուն կարդա՛. այժմեան կենդանիք նոր են, նորութիւն կսիրեն. բաւական էր հնութիւն, այնչափ հնացրուց նրանց անձը, խաւարեցրուց նրանց աչքը: Ցեռս կա՛ց, փախիր գերեզմաններ, եկել ես բերանովդ մահ կխնդրես, փախիր, կխնայեմ քեզ:

Հին ես, պէտք է թաղվես:

Եւ ի՞նչ գերեզմաններից վեր ես կացել, կուզաս կենդանեաց վերայ թագաւորել: Վա՜հ, արդարև հին, ո-

տով գլխով բռնաւոր, խպտառ սպուռ բարբարոս :

Գլորվեցաւ քո անիրը. թէպէտ հայր, բայց դու արդէն ընկար, երբոր ինձ ծնար :

Գանգատ արա Արարչին. այ ոնս իսկ կրողքեմ. ինձ ինչի՞ ստեղծեց, որպէս զի ինչ որ քո էր, լինէր իմ, և ինչ դու էիր, լինիմ ես :

Ո՞ւմ հետ կխօսիս. աշխարհ դարձաւ աչքերդ բաց և վերստին խոփէ : Աշխարհիս կերպին լաւ նայէ. ու դարձեալ գերեզմաններ դարձիր, մեռելոց կարդն անցիր, մրափէ : •

ԳՐԱԲԱՌ

Ես մեռնիմ, դու տիրի՞ս. ե՞ս, ես որ յաւիտենից կենդանի եմ մեռեա՞լ համարվիմ, և դու երեկուան չէզոք, այսօր կենդանեա՞ց կիշխես :

—Հայրե՛ր. կտրեցէք ձեր յոյսը էս ձեր որդիքներից. ապերախտութեան դար է :

Գուրթ ունիմ, ապա թէ ոչ արդէն քեզ իբրև փոշի կըցոր ւէի ու կրոնչացնէի. գիտե՞ս. ես ի՞նչ մարդիկ առ մարտիկս ունիմ. Սուրբեր, հղջներ, Ադամից մինչև իւր վերջին ճետ իմ զօրականներ կլինին. այս դարուս մէջ նրանք պակասեցան : Այ՛ ապերախտութեան դարը, որ ոչ մեծաց պատիւ գիտեն, ոչ ծերոց յարգանք կուտան, ոչ հնոց մեծարանք ու ծառայութիւն կմատուցանեն : Վա՛յ նորոյդ. գնայցէք ուրեմն ձեզ համար նոր Աստուած մի էլ գտէք, որովհետև ժամանակին հետ Աստուածն էլ հնացել է : Երկինք մի՛ նայէք, հնացած է, կվիչէ վաղը կամ մեկէլ օր : Երկրի վերայ ինչի՞ կրնակիք, ելէք յօդս, երկիրը հնացած է կմորտակուի. օդային եղէք, օդային, ձեր գլուխը օդավար է. իբրև հողմ այնպէս կշնչէք, և իբրև տերև այնպէս կշարժիք :

Վա՛յ ժամանակիդ. այսպէս ժամանակի համար, քեզ պէս կառավարիչ :

—Գլորուեր պուտուկ. գաեր գնուփ :

Բայց ո՞վ է դատ արող, իրա՛, կարծես Աստուած էլ նորոգվել է. ինչպէս մեզ նոյնպէս սոցա կենամէ կյաջողէ. հաց կուտայ. կենանք կուտայ :

Էս էլ Քրիստոսի բաներն են, նա էր որ էկաւ նորութիւն հաստատեց աշխարհի մէջ. բայց դու Հա՛յր, Հա՛յր, հին ձայնով կանչեմ Աբրա՛յ Հայր, տե՛ս սոքա կարհամարհին քո ժամանակները. քո ստեղծած ու սիրած հին մարդերը և հնոց գործքերը : Դու ինչո՞ւ ստեղծեցիր այսպիսիք: Հիմիկուան մանուկը մեր վաղեմի ծերերէն շատ խօսիլ գիտէ. խոստովանանք լինի, Աստուած այս մեկը ճշմարիտ է :

Բայց դու, աշխարհաբա՛ռ, գտիր քո կարդն ու ճանապարհը, ապա թէ ոչ, կանեմ քեզ հողի հետ հաւասար :

ԱՇԽԱՐՀԱԲԱՌ

Կամաց. զարհուրեցայ, խելքս գլխէս գնաց :

Իրա՛ հին, կիրք ես բոլորովին: Հինուց դարերու տէր պարո՛ն, ծալէ սուրն ու աղեղ. ապա թէ ոչ դու մարդ չես : Անցիր առաջ փաստերով, խօսք ունիս առաջ բեր. իրաւունք ունիս մէջ բեր. քո ախոյեան վեհ է. քո որդին այսուհետև քեզ ախոյեան է : Ճանաչիր նրան. և ջանացիր հրապարակ հանել իրաւանցդ ապացոյցները. կուլ տուր այդ ահեղ և ամեհի ըսպառնալիքը : Այս դար լուսաւոր և ազատ է :

ԳՐԱԲԱՌ

Եթէ այդպէս. ապա ուրեմն լսէ իմ փաստերը:

Գիտե՞ս, որ Ադամ և Եւայ հայրէն կխօսէին, և գըբարառ էր նոցա խօսք. ինձմով զԱստուած կօրհնէին, և Աստուած ինձմով կխօսէր իւր ստեղծուածների հետ:

Փոխէ. պարո՛ն, ինձմով կնքուած անունները. թէ կենդանեաց և թէ ողջ արարածոց, և նորութեամբդ նոր անուն հնարէ : Ջե՞ս տեսնար. Հայաստանի լեռներ ու ամէն բանի անունը իմ կնքածն է և դու այսօր մի և նոյն հնչումը կհնչես, գուցէ ոչ թէ կհաւանիս նորա համար, այլ անճար ես, աղքատ ես, չունիս, որ բաշխես: Աղքատ հպարտ :

Հապա կասես, մի բարկանար. միանգամէդ կոյր աչքը ի՞նչ վերայ դարձուր. տե՛ս դու ինչ անուն ունիս.

—Բարով խերով չկնքէի՞ քո անուն : Կիսանդամ մարմին. մանաւանդ թէ անանդամ: Ի՞նչդ կմնայ. եթէ ես իմ սեպհականութիւնները պահանջեմ քեզանից : Եթէն ինչէ. կպահանջեմ, կպահանջեմ, այո՛, այո՛, տուր իմ սեպհականութիւն. այժմէն իսկ. տուր իմ իրաւունքներ տոկոսօք. բանն էստեղ էկաւ հասաւ. ուրեմն տուր ինչդր է իմ. ես հին եմ, կառնեմ ու կանցնիմ. մերկացիր. սոսկացիր այժմէն իսկ. այսուհետև, այսուհետև որդիս ախոյեան է ինձ. վեհ ախոյեան : Վա՛յ ինձ :

ԱՇԽԱՐՀԱԲԱՌ

Ինչպէս մեկ հայր իւր որդուց միս և արիւն պահանջէ. պատճառ. որ ինքը տուեր է: Ցնդած ծերունի տարերայ մէջ մոլորական. քեզ բան պահանջելու իրաւունք չմնայ և այսուհետև քեզ կեանք չմնայ : Այ՛, դորա փոխարէն ես կբերեմ գերեզմանատուն. քու շիրմիդ վերայ, հոգւոյ հաց կուտամ աղքատաց :

Ես ժառանգ եմ քեզ և ոչ պարտական, ո՞ւր է, մուրհակ ունի՞ս պարտուցս համար. դուրս հան. ապա թէ ոչ, գնա՛ գերեզման, աշխարհն իմ սեպհական : Ադամայ լեզուո՞վ կպարծիս, կենդանեայ և ամենայն իրաց անունները կյիշես. ապ ամէն արդէն սեպհականեր եմ ես իմ ժառանգութեանց կարդին. գնա՛ տօ գրակդ քրքրի՛. բան ունիս խօսի՞ :

ԳՐԱԲԱՌ

Հնացայ ու անցա՛յ. հը՛յ, ի՞նչ կբարբանջես, անշընորհք. տե՞ս ով եմ ես. սուրբ Մեսրոբայ ոսկորներ ողջ կքաշեմ, դուրս կհանեմ շերմից. թո՛ղ վկայեն. թէ Աստուած ի՞նչ սքանչելի հրաշքով շինեց ու շնորհեց ինձ Հայաստանին, իմ աշխարհին, ու Ադամայ ժամանակից ես կ'կառավարէի. իբրև հոգի անմահ և շնորհալի սահմանեց ինձ, իբրև լոյս կազմեց և իբրև արև հաստատեց ինձ Հայաստանի դպրութեան երկնից՝ մէջ. սուրբ Սահակ իբրև լուսին ինձմով լոյս կառնէր, թարգմանիչներ իբրև մոլորակ ինձմով կլուսաւորվէին և Հայաստանի մթութեան գիշերները կլուսաւորէին :

Ես բուսուցի. ես աճեցուցի Հայոց մտաւորական անդաստանի կրօնական բարոյական և իմաստասիրական բոյսերը. սրբեցի, պահպանեցի յաւիտենական ապականութենից Հայկական նախնեաց և յեռադայից յիշատակները, այնքան մատեանները ինձմով են գոյացած, Քրիստոսի սուրբ Աւետարան, եկեղեցւոյ Սաղմոսն ու Շարական ինձմով են ծնած, ինձմով կնքուած :

Արդ յաւիտեան կան սոքա, կամ և ես կենդանի եմ ես:

ԱՇԽԱՐՀԱԲԱՌ

Աստուած հոգիդ լուսաւորէ :

Իրաւ քո սքանչելիք ու արած բարիքը չեմ ուրանալ ես. քո դարը կյարգէ զքեզ : Մեծ օգուտ, մեծ գործքեր ես, բայց այն օրերը, այսօր էլ չունիս :

«Մինչ մանուկն էիր, անձամբ անձին գոտի ածէիր և երթայիր յո և կամէիր. այլ իբրև ծերացար, ձեռքդ ի վեր կալ և այլք ածցեն քեզ գոտի և տարցեն (ի գերեզմանի) ուր ոչ կամիցիս» :

Այո՛ քո հին դարու հետ և մեք կճանաչեմք քո երախտիքը. և այս երախտագիտութիւն անմահ անելու համար քո մահարձանիդ վերայ կդրոշմենք, խնկով մոմով կպատուենք. ուրեմն փութա՛, մեռիր, որ քեզ սիրենք :

Ի զուր կդոռաս, ի զուրկ պօռաս, քո օրերը կորցըրիր, էլ քո ցանածը չի բուսնի. դու խորտակել ես :

Թէ հաշուի մտնենք, հազար երեք հարիւրէն աւելի տարուան մէջ քո տուած արդիւնքը, համեմատելով իմ ոչ կէս՝ այլ կիսոյ կէս դարուս հետը. դու շատ մասամբ պարտական ու պակաս կմնաս. տարիներդ ու արդիւնքներդ կշիռ չեն մտնի. ինչպէս սարդ կախված լինի երկնից կամարից, այնպէս է քո վաստակը այն ահագին ժամանակներու մէջ, որ անցուցերես ի ոուր և ի զուր : Իբրև աստղ գիսաւոր, երբեմն ի կսրուստերբեմն լուսաւոր, այնպէս է եղեր ընթացքը և քո շահած արդիւնքը :

ԳՐԱԲԱՌ

Ո՛վ է սա, ժամանակաց տէր որ ինձմէ հաշիւ կըպահանջէ :

Իրաւ են ասել. թէ տղային երես մի տար. ես քեզ հետ զլուխ կունեմ խօսելու. դու կը վեր կենաս, կընտես գլխիս. անամօթ դու :

Ժամանակի հաշիւը Ստեղծողը կպահանջէ, լեզուդ տաք տեղ է. իմ ժամանակներուս մը լինէիր. իրաւ գերեզմաններու մէջ կթառէիր. հալածական գարեր. անմիաբան դաղափարներ, գերեվար օրեր. իմ ունեցած ժամանակներ են : Երբ ես Աստուածաշունչ կկազմէի. Հայոց իշխանք և թագաւորն միմեանց միան էին ուտում, և սուրբ Սահակը Պարսկաստան գերի կերթար : Մինչ ես շարական կերգէի. Խորենացին հալածական թափառական կշրջէր : Մինչ Դաւթի հետ փիլիսոփայութիւն, Դաւարի հետ ճարտասանութիւն, և Եղիշէի հետ դպրութիւն ու վարդապետութիւն կանէի, իմ դպրեակ Մեսրովը կմեռնէր. սուրբ և անսուրբ որդիք Հայաստանի՝ իրար խառնուած մէկ մէկի արիւն կթափէին, և հայրենիք իւր ամէն փառքով օտարաց և թշնամեաց կմատնէին : Մինչ Շնորհալու հետ ընդհանրական, եկեղեցական կարգեր ու երգեր կյօրինէի, Լամբրոնացին ինձմով առեանները կշարժէր. ճառեր կ'յօրինէր. մինչ Նարեկացին իւր ողբերդութիւնները կհոդեբանէր. մէկ կողմից բանբասանք, մէկ կողմից զըրպարտանք և հալածանք. եռեռ եռեռ կթափէր իմ ժամանակը : Բայց ես տակաւին այսպիսի դրու թեանց մէջ չմնացի յետ. աշխատեցի. վաստակեցի ; և այսօր իմ Հայաստան, թէ եկեղեցին թէ ազգ, ինձմով է ճանաչում իրան, ինձմով է հաստատված, ինձմով պէտք է վարուի ու մնայ :

Ահա իմ երկինքը այսպէս թանձր ու կսրկտարեր ամպերով պատած է եղեր. ես շատ անգամ իմ գերութեան ճանապարհին ու վիճակին մէջ դարձեալ վաստակել եմ :

Աչքերդ վատատես է, հեռատեսութիւն չունի. որ ցոյց տամ իմ արդիւնքները. Ամրոնդ, այնտեղի բերդի փոշիները ողջ իմ մատեաններն են: Ա՛հ, Լանկթամուրի տարած գերիներ :

Արդեօք կ'կարդաս նախնի անցքերը պատմութեան մէջ. ժամանակ կշռող անտէր : Բայց դու ասա, դրաբառ կհասկանամ՝ որ կարդամ : Վա՛յ քեզ. նոր, իբրև բողբոջ չէ՞ր :

ԱՇԽԱՐՀԱԲԱՌ

Պռօխսումէ, Ջինչ ասէ :

Ուղղութիւնդ կորուսիր, գրաբառ գրաբառութիւնը դ ի գրաբառութեանց զգրաբառս գրաբառութեամբ

դրաբարբառել պէտք ես. բայց դու տես, թէ նորութիւնը ինչպէս աներևութապէս կյաղթահարէ նաև քեզ. դու դրաբառ, բայց խօսքերդ աշխարհաբառ :

Ճանաչէ որ ամենայն բանից աւելի յաղթող է ժամանակ :

Գնա, մոլոր եկեղեցին, դռնից դուրս մի՝ դարձայն բաւական համարէ. քո իշխանութիւն ու սահմանդ եկեղեցին է միայն :

Իսկ քո արդիւնքները, որ իրրև փաստ և իրաւունք մէջ բերիր, աչքերդ միանգամ իմ սակաւօրեայ արդեանց վերայ ձգիր, ու տես կայ քաղաք մի, ուր Հայ լինի և վարժատուն չունենայ. տես քանի՞ ուսումնարաններ, ուսումնականներ և ուսման փափաքողներ կան. տես նոր թարգմանութիւններով, նոր հեղինակութիւններով քիչ է մնացել որ աշխարհը լցնեմ : Քո դարու խորհին փիլիսոփայութիւն և անհաս աստուածաբանութիւն, այժմեան իմ մանկանց բերան ինչպէս ճաշ կուտեն : Տես և իմ լրագիրներ, ամսագիրներ, իմ դարուս սարեր, ձորեր քաղաքներ, թռչուններ, ծաղիկներ և մոլորակներ, իմ հիւսիսն ու արշալոյս, արևմուտք, արևելք ամենը հերոս են :

Իմ ծերն ու մանկտին, երիտասարդ և կոյս իմաստուն են, հեղինակ են : Ո՞ր մէկ գործքերս ու փառքերս յիշեմ. միով բանիւ լուսաւորութիւն եմ ես. և իմ ժողովուրդն ու ժամանակ ինձմով իմ հեշտ և քաղցր և կատարեալ բնութեամբ ու դրութեամբ կլուսաւորեմ :

Այսուհետև քեզ վերայ, ինչպէս հայրենի աւերակաց վերայ կհային Հայեր. քո հիմունքը կհարդեն մի այն իրրև դպրութեան տաճարի նախնականոյց վէմերը. բայց իրրև այժմեան շինութեան անպէտ ու անվայել :

Բաւ է քեզ, փախիր եկեղեցւոյ դռնից ներս. դուցէ այն տեղէն էլ հալածվիս. գնա այն տեղ քո Ցայսմաւուրք, Հարանց վարք, Ճառընտիր, Մաշտոց, Տօնացոյց, Սաղմոս, Շարական կարգա, մեռելոց յիշատակը կատարէ, այն միայն քո է. գուցէ օր գայ, որ եթէ չհալածվիս էլ դռնէ եկեղեցւոյ մէջ թաղվիս :

Ես ինչպէս աշխարհի ընդհանրական տէր, նոյնպէս և եկեղեցին էլ իրաւունք ունիմ մանալու. վարդապետաց, քարոզողաց բերան ու ատեան իմն է. քեզ միայն դաւեր և աւրբսեղան կմնայ : Տեղդ ու կերպդ ճանչցիր :

ԳՐԱԲԱՌ

Աստծու անիծած, Բաբելոնեան հողմով ցրուած, բաղմակերպեան դու հրէշ զօրացար, յոռացար, և քո սահմանից անցկացար

Իրան տես, ղիւր ժամանակը և գործքերը տես :

Ես, ինչպէս Արարչին ստեղծուած այնպէս անարատ և կատարեալ եմ. ուր որ լինիմ նոյն և մի եմ. իսկ դու. ինչպէս հաղար աղուէսներից մի մուշակ կարուած, կտոր կտորի աննման, կերպը կերպի անյարմար. ամէն մէկ աշխարհ, ամէն մէկ դաւառ, ամէն մէկ գեղն ու քաղաք զատ զատ կբարբառիս : Կարկանաց լուսաւորութիւն վրադ առած կշրջիս : Ստամբօլու մէջ (կոր) ես. Կարնայ մէջ (կր). Մշոյ մէջ (ջիմալ) ես. Վանայ մէջ (խորօտ մորօտ) ես. Փոքր Հայոց մէջ առ հասարակ Տաճկականով խառն զանդուած մի ես (Էֆէնդիմ սէյլէյիմ) : Ռուսաստանի մէջ (գնում գալիս) ես. Թիֆլիզի մէջ (վո՞ւնցիս) : Ղարաբաղն երթաս (Ադամ յի՞նչ ընելական ես). Աքուլիս (ջօկ) ես. Օ՛ տղա, հօձ բիրիմ, կօտիս) Թողնում իմ Հնդկաստանը, Պարսկաստանը, Խրիմը և Նոր Նախիջևանը, և այլն և այլն և այլն :

Դէ՛ հպարտացիր քո ժամանակով, քո լուսաւորութիւնով :

Վարժատուններովդ կպարծիս, դոցա հիմն ես եմ. նոցա վարիչը ես եմ. քերականից մինչև քերականութիւն. ճարտասանութիւն, տրամաբանութիւն և շարադրութիւն ուսուցանող ես եմ. և ինձ համար կուսանին : Բաց արա՛ դրադարանները, կտեսնիս, ամենը իմ ժամանակի և իմ շնորհիւ վաստակած գանձերով հարստացած են :

Քո լրագիրնե՞ր ու ամսագիրներ, նոր հեղինակութիւնն՞ր ու թարգմանութիւնները : Այո՛, այո՛, իրրև փրփուրս ի ջուր, իրրև մրջիւնս անղօրս, և իրրև մրջեւս ի յօդս, այնպէս և անչափ են նոցա համեմատութիւն իմ հետ :

Իմ սահման ու գերեզման կգնես եկեղեցին. բայց եկեղեցին տէր է աշխարհի. բարձր է քան թէ քո քաղաքականութիւնը. որոյ թեւի տակ թառած ես իրրև նապաստակ ի վէմս. եկեղեցին չի հնանար, պարո՛ն, ժամանակը աղղեցութիւն չունի եկեղեցւոյ վերայ, և ոչ էլ կմեռնի նա. ուրեմն և ես անմահ ու բարձր եմ ի նա : Ես իմ խօսքերը քեզ հանկացնելու համար քո լեզուով քեզ հետ կխօսիմ, բայց դու կծիծաղիս հօրդ վերայ. Քամ դու սակայն արրած, կամ մերկ չեմ ես :

—Այն ինչ սոքա աւելի կատաղի և անվերջ կռուի համար կպատրաստվէին, ահա ժամանակը իւր հզօր փառքով ու յաղթական կառքով այս հանդէսի մէջը մտաւ, երկու հակառակ զօրագլուխներ, իւր առջևը կանչեց և այս վճիռը կնքեց, հաստատեց :

«Գրաբառին միշտ յարգանք և անմահութիւն :

«Աշխարհաբառին կեանք և յառաջադիմութիւն :

Գ. Սրուանձտեանց

Աշակերտ Ժ. Վ. Վարագայ :

Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ (Ի ՏՊԱՐԱՆԻ Գ. ԱԵԼԲՈՒՄԵԱՆՑ
Խմբագիր Գ. ՍՈՒՄԵՕՆԵԱՆՑ՝ (Հ. ԷՆՖԻՍՃԵԱՆՑ

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ. 31 августа 1863 г.
ТИФЛИСЪ.